

պարհին» եւ որոնց ոսկորներուն ինքը գրողը, այնուամենայնիւ, չնաշխարհիկ վեհանձնութեամբ մը «անդորրութիւն» կը յղէ իր «բանուորի» միջոցով... «Դատապարտութիւնը» կատարեալ է, առանց վարանումի ու վերապահումի:

Ա՛հ, հայ բարբեր... Եւ սա դեռ լաւերէն է: Չեմ ճանչնար անձամբ, բայց կը լսեմ թէ հայ մարքսիստներէն լաւագոյնն է, ամենէն լուրջն ու վայելուչը եւ ամենէն աւելի հայը:

Այդ նպաստաւոր տեղեկութիւններէն քաջախելուած, ձեռքս առայ Ս. Ղազարի տպարանէն ելած շքեղ հրատարակութիւնը, կարգացի նախ յառաջարանն ու վերջարանը, ընդամէնը եօթ էջ... Եւ այնքան կարճ տարածութեան վրայ՝ արամաբանութեան ու բարեխղճութեան այդքան գոհարներ... Ապա կարգացի ամբողջ գիրքը, լեցուն նոյնպիսի գոհարներով:

Ի՞նչ կ'ուզեն ըսել այդ Ֆրադամով քննադատները, յաւիտենորէն կրկնելով սա անհեթեթ բառերը. «Դաշնակցութիւնը՝ շահագործող», Դաշնակցութիւնը՝ բուրժուա, մանր բուրժուա... Կապիտալիստներու սպասաւոր, մեծատուններու, արտօնեալներու գործիք» եւ այլն, եւ այլն:

Տեղ մը, բոլորովին ուրիշ առթիւ, Անանուն կը գրէ քաջաբար ու հպարտութեամբ.

«...Դաշնակցութիւնը... մ'նայ... միշտ կծկուած ու ներողամտութիւն հայցող: Դատակարգային կոռուի բացձակատուութիւնն երբեք չչոքեց նրա դրանը... Դաշնակցութեան մանրբուրժուական էութիւնն գոյութեան այլ վիճակ չպիտի պարզեւէր նրան: Նա սօցիալիզմի մաքուր անօթ կարող էր դառնալ միմիայն բանուոր դատակարգի վճռական յաղթութեան պահին, իսկ մինչեւ այդ պիտի երեւար եւ ահնաձութեամբ փէշերը ժողովէր օտարի սեղանի շուրջը»\*)

Այդ «օտարը» հայ բուրժուազիան է: Հայ արտօնեալներն են, շահագործողներն են, որոնց հլու գործիք եղած է Դաշնակցութիւնը... Հաւանականօրէն իր ամբողջ երեսունեւհինգամեայ գոյութեան ընթացքում, — յամենայն դէպս իր կովկասեան գործունէութեան ըն-

թացքում, մասնաւորապէս Հայաստանի անկախութեան կռիւներու միջոցին, — 1918 — երկրի մէջ եւ արտասահմանում:

Ոչ միայն բուրժուա պետութիւններն ու տիպլոմատներն են խաբել մեզի, այլ նոյն իրենք (հայ) «արտօնեալներն ու մեծատուններն խարդախութեան ու շահագործման շաղով» ընթացք են: Ուստի եւ հայկական դատը վիժեր է...

Հասկնանք այս պարոններուն.

Մենք հայ մեծատուններու հետ, այո՛, սեղան նստեր ենք եւ հայրենիքի ազատութեան ծրագիրներ մշակեր ենք: Ահա Նուպար փաշա, Սան Մասեհեան, Գարրիէլ Նորատունկեան եւ ուրիշներ: Ի՞նչ. անոնց ստրուկը եղած ենք մենք... Անոնց հրամանով կը շարժէր Հայաստանի Պատուիրակութիւնը: Կամ անոնք դաւաճաններ են հայկական դատի, չէ՞ն ուղեր Հայաստանի ազատագրումը թիրաքական լուծէն. յանցա՞նք էր Դաշնակցականի համար անոնց հետ համերաշխիլը:

Անանուն կ'ըսէ — այո՛, յանցանք էր: Ուրովհետեւ ինչպէ՞ս կրնայ ուսմկավար մը, յեղափոխական մը, ընկերավարական մը թեւ թեւի գործել փաշայի մը, խանի մը, էֆէնտիի մը հետ. անգամ տագնապի ընթացքին:

Եւ կը հեզնէ, չակերտներու մէջ կ'առնէ փաշայի գործակից Դաշնակցականները:

«Հասարակական գործիչները», կ'ըսէ, «համերաշխօրէն աշխատում էին Պօղոս Նուպարի հարկի տակ»:

Եւ այդ մեղապարտ համերաշխութեան պատկերը կատարեալ ընկու համար, առաջ կը բերէ Պօղոս Նուպարի կողմէն ինծի (Թիֆլիս) ուղղուած մէկ նամակը, որու մէջ կաթողիկոսական պատուիրակութեան նախագահը կը գրէր. «Նա յատկապէս հարկ սեպեցի ձեզ գրելու, պահած լինելով լաւագոյն յիշողութիւններ մեր երկուսիս յարարերութիւններէն հոս Պարիզի մէջ, յիշելով այն շիտակ եւ ազդու աջակցութիւնը, որ դուք ցոյց տուիք ինձի՝ ոչֆօրմների բանակցութիւնների ժամանակ»:

Այս մէջբերումով մարքսիստ հեղինակը կ'ուզէ, անուշտ, հասկցնել իր դիւրահաճ լրսարանին.

— Տեսէ՛ք, թէ ո՞ր աստիճան գաղափարա-

\*) էջ 134